

2014թ. Խոշոր հարկ վճարողների ՀՏ մոնիտորինգի ամփոփ ցուցանիշների վերլուծություն

Սույն վերլուծությունը իրականացվում է այն 519 հարկ վճարողների ամփոփ ցուցանիշների հիման վրա, որոնք ՀՀ ֆինանսների նախարարի հրամանով ընդգրկված են Խոշոր հարկ վճարողների հարկային տեսչության կողմից 2014թ.-ի ընթացքում սպասարկվող հարկ վճարողների ցանկում:

Խոշոր հարկ վճարողների մոնիտորինգի ամփոփ ցուցանիշների համեմատական վերլուծությունը իրականացվում է նույն 519 հարկ վճարողների 2013 և 2014 թվականների փաստացի տվյալների հիման վրա:

2014թ. երրորդ եռամսյակի ամփոփ ցուցանիշների վերլուծության հիման վրա կարելի է փաստել, որ

1. Իրացումից հասույթը կազմել է 932.4 մլրդ դրամ կամ նախորդ տարվա նույն եռամսյակի համեմատությամբ աճել է 16,0 %-ով:
2. Ներմուծման ծավալները նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատությամբ աճել են 10,2 %-ով և կազմել 295.3 մլրդ դրամ:
3. Արտահանման ծավալները կազմել են 122.5 մլրդ դրամ նախորդ տարվա նույն եռամսյակի 124,0 մլրդ դրամի փոխարեն:
4. Վճարված մաքսային վճարների ցուցանիշի առումով 2014թ.-ի երրորդ եռամսյակում խոշոր հարկ վճարողների կողմից վճարվել է շուրջ 55.5 մլրդ. դրամ:
5. Պետական բյուջե վճարված հարկերի և այլ պարտադիր վճարների ցուցանիշի առումով 2014թ.-ի երրորդ եռամսյակում խոշոր հարկ վճարողների կողմից վճարվել է շուրջ 89.9 մլրդ. դրամ: Ընդ որում, նշված կազմակերպությունների կողմից 2014թ.-ի երրորդ եռամսյակում վճարվել է հանրապետությունում հավաքագրված հարկային եկամուտների մոտ 51%-ը:
6. Հարկային մարմնի կողմից կատարվել են 176 հարկային ստուգումներ, այդ թվում բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության 77 ստուգումներ, որոնց արդյունքում առաջադրվել է բյուջե լրացուցիչ վճարման ենթակա գումարներ 7.5 մլրդ. դրամի չափով:
7. 01.10.2014թ.-ի դրությամբ խոշոր հարկ վճարողներն ունեցել են 142.2 մլրդ դրամ գերավճար, այդ թվում՝ ավելացված արժեքի հարկի գծով՝ 84.8 մլրդ դրամ, իսկ հարկային պարտավորություն՝ 19.0 մլրդ դրամ: Նշված

Ժամանակահատվածում պետական բյուջեից հարկ վճարողների գերավճարների գումարներից ավելացված արժեքի հարկի վերադարձի ձևակերպում է կատարվել 8.5 մլրդ դրամի չափով, իսկ գերավճարների գումարներից այլ հարկատեսակների գծով հաշվանցվել է 1.5 մլրդ դրամի չափով:

8. Աշխատողների միջին ցուցակային թիվը դիտարկվող ժամանակահատվածում նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ ավելացել է 3133 մարդով կամ 2%-ով, իսկ աշխատանքի վարձատրությանն ուղղված միջոցների աճը կազմել է 9.8%: